

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, -----2016 թ.

(արձանագրություն N° )

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

### ԿԱՐԳ

Բողոքարկման կարգը ուղղված է ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքի գնահատման (գնահատականի) վերանայմանը: Ուսանողը պետք է գիտակցի ստացած գիտելիքի գնահատման անհրաժեշտությունը, որն ուղղված է նրա կողմից ձեռք բերած ունակությունները բացահայտելուն: Ուսանողի ունակությունների գնահատումը պետք է լինի առավելագույնս հստակ և թափանցիկ: Դասավանդողը պարտավոր է ուսանողին տեղեկացնել և ծանոթացնել դասընթացին ուղղված գնահատման համակարգին և դրա բաղադրիչներին: Դասավանդողը պարտավոր է օբյեկտիվ գնահատել ուսանողին՝ ըստ ուսանողի կողմից ցուցաբերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների և ապահովել ուսանողին անհրաժեշտ տեղեկատվությամբ: Գնահատման համակարգը պետք է ապահովի ուսանողի գիտելիքների օբյեկտիվ գնահատումը: Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար համալսարանում սահմանվում են քննությունների գրավոր և բանավոր ձևեր: Ուսանողը պետք է հստակ տեղեկացված լինի գնահատմանը ուղղված իր իրավունքներին և պարտականություններին.

– տեղեկացված լինի գնահատման սկզբունքներին և ձևերին,

– իմանա գնահատման բոլոր բաղադրիչները,

– իմանա յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը ընդհանուր գնահատականի վրա: Ուսանողը գնահատվում է ըստ առարկայի համար սահմանված գործոնների, որոնցից են՝ ակտիվության դասերին, կատարած անհատական և ինքնուրույն աշխատանքների կատարողականը, միջանկյալ և վերջնական քննությունները: Քննող դասախոսը կամ քննական հանձնաժողովը պարտավոր են ուսանողների գիտելիքների գնահատումը կազմակերպել և իրականացնել օբյեկտիվ և թափանցիկ ձևով: Ուսանողի կողմից

գրագողության փորձ անելու դեպքում չեղյալ են համարվում քննական տետրում կատարած գրառումները: Վերջնական գնահատականի հիմքն են հանդիսանում բոլոր բաղադրիչներով հավաքված միավորները:

1. Ուսանողը իր գնահատականից բավարարված չլինելու դեպքում իրավունք ունի այն բողոքարկելու. կարող է բողոքարկել անհատական և ինքնուրույն աշխատանքների, միջանկյալ և վերջնական քննությունների գնահատականը:
2. Ուսանողը բողոքարկման իրավունք ունի՝
  - եթե գնահատումը ոչ օբյեկտիվ է,
  - եթե դասավանդողի կողմից կատարվել է գնահատման անհստակություն,
  - գնահատողը չունի բավարար փորձ և հմտություն ուսանողին գնահատելու համար:
3. Գնահատականով չբավարարված ուսանողը կարող է դիմել ֆակուլտետի դեկանին՝ նրա գիտելիքները հավելյալ գնահատելու խնդրանքով:
4. Գրավոր քննության դեպքում՝ յուրաքանչյուր ուսանող բողոքարկումը պետք է անձամբ ներկայացնի գրավոր տեսքով ոչ ուշ, քան գնահատականը հայտարարելուց մեկ օր հետո: Բողոքարկումը նշվում է դեկանատի կողմից հատուկ մատյանում:
5. Բանավոր քննության դեպքում՝ յուրաքանչյուր ուսանող, առանց լսարանից հեռանալու, իրավունք ունի խնդրել քննասենյակ հրավիրել ֆակուլտետի դեկանին և տվյալ ամբիոնի վարիչին՝ գնահատման վերաբերյալ բողոքարկում ներկայացնելու համար:
6. Բողոքարկման դեպքում դեկանի կողմից ստեղծվում է բողոքարկման հանձնաժողով: Բողոքարկման հանձնաժողովը նորից ստուգում է ուսանողի աշխատանքը և լսում ուսանողի կողմից առարկային վերաբերող թեմաների ներկայացումը:
7. Բողոքարկումը և գնահատումը հանձնաժողովի կողմից պետք է լինեն օբյեկտիվ և թափանցիկ: Արդյունքում գնահատականը կարող է ինչպես բարձրացվել, այնպես էլ իջեցվել կամ թողնել առանց փոփոխության:
8. Հանձնաժողովի կողմից նշանակված գնահատականը վերջնական է: Այն նշանակվում է առանձին ուղեգրի մեջ և կցվում ընդհանուր քննական թերթին, հավելյալ նշվում է կատարվում ստուգման գրքույկում: Կազմվում է բողոքարկման հանձնաժողովի արձանագրություն:
9. Բողոքարկումը չեղյալ է համարվում եթե՝

– դիմումի մեջ շոշափված են “Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողների գիտելիքների ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման կանոնակարգի” և գնահատման չափանիշների հետ կապված հարցեր:

– դիմումի մեջ ուսանողը պատճառաբանում է իր առողջական խնդիրները:

10. Ամփոփիչ ատեստավորումից (ավարտական պետական քննություն, դիպլոմային նախագծի/աշխատանքի պաշտպանություն) ստացած գնահատականի բողոքարկումն իրականացվում է համաձայն ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 2011 թ.-ի հոկտեմբերի 31-ի №1197-Ն հրամանով հաստատված “Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի” 33-րդ կետի